Հրանտ Աբրահամյան

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը[1]

1922 թ. հուլիսի 5-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումը, քննարկելով «Լեռնային Ղարաբաղի դրության մասին» հարցը, ընդունեց հետևյալ որոշումը. հանձնարարել քարտուղարությանը դիմել Անդրերկրում՝ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի՝ Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավարություն տալու որոշումն իրականացնելու խնդրանքով[2]: 1923թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ Անդրերկրկոմի պլենումը, որը, լսելով Անդրերկրկոմի պլենումի 1922թ. օգոստոսի 14-ի որոշմամբ ստեղծված Ղարաբաղի ժամանակավոր կոմիտեի գործունեության մասին Սուրեն Շադունցի և Արմենակ Կարակոզովի զեկուցումները, Ադրբեջանի իշխանություններից պահանջեց մեկամսյա ժամկետում «Լեռնային Ղարաբաղն առանձնացնել իբրև ինքնավար մարզ»[3]: Ելնելով այդ որոշումից Ադրբեջանի կենտգործկոմը ստիպված էր 1923 թ. հուլիսի 7-ին ընդունել հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի» կազմավորման մասին: Մարզը կազմավորվեց «Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից», որի տերերին, այսինքն՝ հայերին էին պատկանում «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինումը»: Ադրբեջանի իշխանությունը թեև Լեռնային Ղարաբաղին տվեց ինքնավարություն, սակայն բզկտեց հայոց Արցախը. ԼՂԻՄ-ից անջատեց նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը՝ ստեղծելով մարզից դուրս շրջան: ԼՂԻՄ-ի լեռնային շրջանի արևմտյան մասը անջատվեց մարզից, և ստեղծվեց «Քուրդստանի գավառ», որով Արցախն անջատվեց մայր Հայաստանից, Արցախից կտրվեց նաև ամբողջ հյուսիսային տարածքը՝ Գյուլիստանն ու Գանձակի հայկական լեռնային մյուս շրջանները[4]:

Այսպիսով՝ 11,5 հազար քառակուսի կմ տարածք և 12 գավառ ունեցող պատմական Արցախից ԼՂԻՄ-ի վարչական տարածքը ամփոփվեց միայն 4,4 հազար քառակուսի կիլոմետրով:

Շուտով Ադրբեջանում որոշեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավարության վերաբերյալ հռչակագիրն ինչ-որ կերպ օրինականացնել՝ արցախցիներից կորզելով հավանության և համաձայնության հավաստիք: Ձևակերպվեցին փաստաթղթեր, թե իբրև 1923 թ. օգոստոսին Լեռնային Ղարաբաղում անց է կացվել հանրաքվե, և մարզի բնակչությունը հավանություն է տվել Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին որոշմանը: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղում ոչ մի հանրաքվե էլ տեղի չի ունեցել: Այդ հարցը նույնիսկ չի քննարկվել կուսակցական և

---

[1] Հայոց պատմություն, հատոր IV, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, «Զանգակ» հրատարակչություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 614-618:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.2, գ.3, թ.6:

[3] Նույն տեղում, ց.3, գ.12, թ.3:

[4] Տե՛ս Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 273:

պետական մարմիններում: Միայն հրավիրվել են համայնքների ներկայացուցիչների անկուսակցական կոնֆերանսներ, որտեղ խոսվել է Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին հռչակագրի շուրջ: Եվ դա էլ մարզկոմի քարտուղար Սերո Մանուցյանը Բաքվի պահանջով ձևակերպել է որպես «հանրաքվե»[5]:

1923 թ. նոյեմբերի 6-ին Ստեփանակերտի կուսակցական դպրոցում տեղի ունեցած ԼՂԻՄ խորհուրդների առաջին համագումարը ստեղծեց մարզային խորհուրդ և ընդունեց մի շարք որոշումներ: Ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է մշակեր մարզխորհրդի կանոնադրությունը: Վերջինս՝ որպես ԼՂԻՄ սահմանադրություն, մամուլում հրապարակվեց 1924 թ. հուլիսի 6-ին, ըստ որի՝ բացի Շուշի և Ստեփանակերտ քաղաքներից, մարզի մեջ մտցվել էին Շուշիի գավառից՝ 115, Ջիվանշիրի գավառից՝ 52, Կարյագինոյի գավառից՝ 30 գյուղեր և Ղուբաթլուի գավառից՝ Բերգաձորը՝ շրջակա գյուղերով: Սահմանադրության համաձայն՝ 1924թ. նոյեմբերի 26-ին ստեղծվեց ԼՂԻՄ ժողկոմխորհը, որը գործեց մինչև 1929թ.: Արդեն 1925թ. վերջին Լեռնային Ղարաբաղում գործում էին սահմանադրությամբ նախատեսված բոլոր գերատեսչությունները:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատման պահին երկրամասի սոցիալ-տնտեսական պայմանները խիստ ծանր էին: Այդտեղ չէր գործում ոչ մի ձեռնարկություն: 1913 թ. համեմատությամբ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կրճատվել էին 47,8 լծկան անասունների քանակը՝ 24, ձիերինը՝ 50,8, մանր եղջերավոր անասուններինը՝ 35 տոկոսով[6]: Մարզի 225 բնակավայրերում ապրող 27058 տնտեսություններն ունեին ընդամենը 104 648 գլուխ անասուն: Երկրամասի գյուղական բոլոր տնտեսությունների 41 տոկոսը զուրկ էր լծկան անասուններից, իսկ կեսից ավելին՝ հողամշակման գործիքներից: 1921թ. հազիվ ստացվել է 450 հազար փութ հացահատիկ՝ 1913թ. 969 հազար փութի դիմաց: Խաղողի հեկտարի միջին բերքատվությունը չէր անցնում 8 ցենտներից: Վարելահողերի սակավությամբ Լեռնային Ղարաբաղն Անդրկովկասում զբաղեցնում էր վերջին տեղերից մեկը: Սովն ու աղքատությունը տիրում էին ամենուր[7]: Երկրամասում իրագործվող նոր տնտեսական քաղաքականությունը խիստ դանդաղ էր արմատավորվում: Այնուամենայնիվ, այն աստիճանաբար աշխուժացրեց մարզի կյանքը: Հետզհետե վերականգնվում էր տնտեսությունը:

Սակայն մեծ դժվարություններ էին առաջ գալիս արտադրված մթերքների իրացման գործում: Արդեն 1925 թ. ցանքատարածությունները հասան 33 270 դեսյատինի, և ստացվեց 852 հազար փութ հացահատիկ, որը կազմում էր նախապատերազմյանի 92,2 տոկոսը: Չորս տարում մարզի այգիների բերքատվությունը բարձրացել էր 2,5 անգամ և հասել նախապատերազմյանի 70,7 տոկոսին: 1921 թվականի համեմատությամբ 1925 թ. կրկնապատկվել էր բոլոր տեսակի անասունների գլխաքանակը:

---

[5] Տե՛ս Տե՛ս Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 274-275:

[6] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (ԼՂՀ ՊԱ), ֆ. 23, ց.1, գ.2, թ. 51:

[7] Տե՛ս Ադրբեջանի պետական արխիվ (ԱՊԱ), ֆ. 410, ց. 1, գ. 90, թ. 3:

Արցախցիները դարեր շարունակ զբաղվել էին խմիչքների, անաձնապես թթի օղու արտադրությամբ։ պատերազմից առաջ արցախցիները տալիս էին Անդրկովկասում արտադրվող խմիչքների 7-8 տոկոսը։ 1922 թ. երկրամասում արտադրված սպիրտը կազմել է նախապատերազմյան մակարդակի 45 տոկոսը[8]։ Արդեն 1925թ. երկրամասում արտադրվում է 3 109 621 աստիճան սպիրտ[9], որը գրեթե հավասար էր նախապատերազմյան մակարդակին։ Մարզում սպիրտի հետագա զարգացումն ընդլայնելու համար 1925 թ. Ասկերանում կառուցվեց օղեթորման գործարան, որի օրական արտադրողականությունը հասնում էր 10 հազար աստիճան առաջին կարգի սպիրտի։ Սպիրտի արտադրությունը զարգացնելու լավագույն հնարավորություններ կային Արցախի Վարանդայի գավառում։ Այդտեղ կարող էին տարեկան արտադրել մինչև 2,5 միլիոն աստիճան սպիրտ։ Անհրաժեշտություն զգացվեց օղեթորման երկրորդ գարծարանի, որը կառուցվեց Վարանդայի Քյոնդալան գետի ձախ ափին 1926-1927թթ.։ Այդ գործում մեծ օգնություն ցույց տվեց Խորհրդային Հայաստանի կառավարությունը։ 1927 թ. հոկտեմբերի 1-ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի գինու և սպիրտի տրեստը՝ Ղարգինտրեստը, որին հանձնվեցին տվյալ երկու գործարանները[10]։

1921 թ. սկսած՝ աշխատանքներ էին կատարվում մետաքսագործական ֆաբրիկաները վերականգնելու ուղղությամբ։ Մետաքսագործությունը Արցախում գոյություն ուներ դեռևս հնուց։ 1913 թ. այդտեղ կար 46 ֆաբրիկա, որոնցից 1922թ. գործում էր հինգը։ Մետաքսի ֆաբրիկաները վերականգնելու և 40-50 տարվա հաստոցները նորերով փոխարինելու համար 1925 թ. ներդրվեց 188 հազար ռուբլի[11]։ Մետաքսագործության՝ որպես մարզի արդյունաբերության հիմնական ճյուղի վերականգնումն ու զարգացումը հարկադրեցին ստեղծել տնտեսական համակարգող մարմին։ Մարզխորհրդի գործադիր կոմիտեն որոշեց կազմակերպել մետաքսի տրեստ[12], որն իր գործունեությունը սկսեց 1926 թ. հունվարի 1-ից։ Տրեստի իրավասությանն անցան մարզի տարածքում գործող պետական բոլոր մետաքսագործական ձեռնարկությունները։ Նորաստեղծ տրեստը նյութական կարևոր օժանդակություն ստացավ մետաքսի միութենական տրեստից, որի օգնությամբ 1925/26 տնտեսական տարում շահագործման հանձնվեց 3 ֆաբրիկա[13]։ Արդեն 1927/28 տնտեսական տարում մարզում աշխատում էին 13 ֆաբրիկաներ, որոնք այդ տարում արտադրեցին 36 672 կգ մետաքսահումք։

Լեռնային Ղարաբաղի տնտեսության վերականգնման տարիներին դեռևս անօգտագործելի էին մնում անտառները, որոնք կազմում էին մարզի տարածքի մեկ երրորդը։ Հաճարենիներով ու կաղնիներով հարուստ անտառներն օգտագործելու համար չկար փայտամշակման որևէ գործարան։ Մարզի տարածքում դրանք

---

[8] Տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 18, թ. 58։
[9] Տե՛ս նույն տեղում։
[10] Տե՛ս նույն տեղում, ֆ. 33, ց. 1, գ. 45ա, թ. 5։
[11] Տե՛ս նույն տեղում, ֆ. 11, ց. 1, գ. 48, թ. 11։
[12] Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, 31 օգոստոսի, 1924։
[13] Տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 48, թ. 6։

հիմնվեցին 1924 թ.: Մեկ տարի անց մարզի անտառներից ստացվել էր 58 309 ռուբլու զուտ եկամուտ:

Առաջաձորի ջրաղացաքարերի արտադրությունը հայտնի է շատ վաղուց: Արտադրանքի այդ տեսակն Անդրկովկասում եզակի էր: Արցախից ջրաղացաքարեր էին արտահանում Կովկասի տարբեր շրջաններ, Ռուսաստան, Միջին Ասիա և Մերձավոր Արևելքի երկրներ: 1923 թ. վերականգնվեց ավերված հանքը և հանձնվեց մարզային ժողտնտխորհին: Կարճ ժամանակամիջոցում կրկնապատկվեց արտադրությունը:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մարզում հիմնական շեշտը դրվում էր հատկապես գյուղատնտեսության վերականգնման և նրա հետագա զարգացման վրա: Դրանում կարևոր դեր խաղաց գյուղատնտեսական ընկերությունների ստեղծումը: 1924 թ. երկրորդ կեսից սկսած՝ Լեռնային Ղարաբաղում կազմակերպվեցին հողի մշակման մեքենայական, վարկային, ջրային և այլ ընկերություններ: Սկսած 1923 թ.՝ կազմակերպվել էին մի շարք ագրոկետեր, որոնք գյուղական տնտեսություններին օգնում էին արմատավորելու հողամշակման առաջավոր փորձը: Միջոցառումներ ձեռնարկվեցին վերականգնելու ոռոգման համակարգը: 1924 թ. մարզում գործում էր 61 քյարիզ (Ղարաբաղում ստորգետնյա ջրերը ինքնահոս դուրս բերելու կառույց), որոնք օգտագործվում էին նաև ոռոգման համար:

Մարզում համեմատաբար արագ էր վերականգնվում անասնապահությունը: 1925 թ. Լիսագորում՝ թթու ջրի տեղամասում, որը գտնվում է ծովի մակերևույթից 1800մ բարձրության վրա, կազմակերպվեց անասնապահական ֆերմա, որի նպատակը արոտավայրերի և մշակաբույսերի օգտագործման ձևերն ուսումնասիրելն էր[14]:

Լեռնային Ղարաբաղում հանդես եկան առաջին վարկային ընկերությունները և կոոպերացիայի մի շարք ձևեր: Արագորեն էր զարգանում հատկապես սպառողական կոոպերացիան: Առևտրական կետերի թվաքանակը մարզում 1925 թ. հասել էր 283-ի: Այստեղ կատարվող ամբողջ առևտրի 60 տոկոսը բաժին էր ընկնում պետական և կոոպերատիվ առևտրական կետերին[15]:

Տնտեսության վերականգնումն ավարտվեց 1928 թ.: Հետագա տարիներին հետևողականորեն զարգանում էին արդյունաբերությունն ուգյուղատնտեսությունը, և վերելք էր ապրում մշակույթը: Արդյունաբերական բնագավառում խմիչքների և մետաքսի արտադրությունը և այլ ոլորտներ ընդլայնում էին իրենց ծավալը: 1929 թ., երբ լուծարվեցին Բաքվում գտնվող Խորհրդային Հայաստանի առևտրական հիմնարկները, նրա բոլոր առևտրական կետերն ու պահեստները տրվեցին Ղարգինտրեստին: 1931 թ. սկսած՝ Ասկերանի օղեթորման գործարանն արտադրում էր կոնյակի հումք: Արդեն շրջանառությունը կազմում էր 9,8 միլիոն ռուբլի: Ղարգինտրեստը մեծ դեր կատարեց մարզում խաղողագործության, թթաբուծության և շերամապահության զարգացման գործում: Ղարգինտրեստը, որը 1933 թ. հունվարի 1-ից վերանվանվեց Ղարաբաղի

---

[14] Տե՛ս ԱՊԱ, ֆ. 411, ց. 1, գ. 1, թ. 31:

[15] Տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, ց. 2, գ. 47, թ. 23:

գինու և սովխոզների տրեստ, ավելի ընդարձակեց իր գործունեության շրջանակները և արդեն 1940 թ. արտադրեց 105,2 հազար դեկալիտր գինի, 1,2 հազար դեկալիտր կոնյակ և այլ խմիչքներ[16]:

Մարզում մետաքսարդյունաբերության զարգացման նպատակով 1927 թ. Ստեփանակերտում սկսվեց մետաքսագործական նոր ֆաբրիկայի շինարարությունը, որի առաջին մասնաշենքը շահագործման հանձնվեց 1929 թ.: Այն սարքավորվել էր իտալական ութբռնիչավոր «Բատալիա» համակարգի 96 հաստոցներով: Մարզում մետաքսարդյունաբերությունը նորանոր հաջողությունների հասավ 1930-ական թթ., երբ մասամբ լուծվեց սեփական հումքի՝ բոժոժի արտադրության հարցը: 1934թ. մետաքսի տրեստը վերանվանվեց Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչության: Ստախանովյան շարժումը լայնորեն ծավալվում էր նրա բոլոր ձեռնարկություններում, որոնց արտադրանքը 1940 թ. հասել էր 98,1 տոննա մետաքսահումքի և 25,9 տոննա ոլորաթելի[17]:

ԼՂԻՄ արդյունաբերության զարգացման գործում կարևոր նշանակություն ուներ էներգետիկական բազայի ապահովման խնդիրը: 1913 թ. Արցախում արտադրվել է 0,08 միլիոն կվտ էլէկտրաէներգիա, որը 1928 թ. հասել էր 0,29 միլիոնի: Էլեկտրաէներգիայի պակաս արտադրության ճեղքվածքը վերացնելու նպատակով Կարկառ գետի վրա կառուցվեց 255 կվտ հզորությամբ էլեկտրակայան, որը շահագործման հանձնվեց 1930 թ.:

Նախապատերազմյան հնգամյակի տարիներին կառուցվեցին Ստեփանակերտի փայտամշակման և մեխանիկական արհեստանոցները, լիովին վերակառուցվեց ջրաղացաքարերի արտադրությունը, կառուցվեցին տասնյակ տնայնագործական ձեռնարկություններ: Զարգացավ գյուղատնտեսությունը, լուծվեց հողաշինարարության հարցը: Հողագործությանն օգնություն էին ցույց տալիս նորաստեղծ մեքենայական ընկերությունները և տրակտորային շարասյուները: 1926 թ. մարզի գյուղական տնտեսությունների 55 տոկոսն ընդգրկված էր տարբեր կոոպերատիվներում[18]: Մարզում գյուղատնտեսության վերականգնման գործում դեր ունեին կատարելու կոլտնտեսությունները: 1927 թ. վերջին մարզում կար 13, իսկ 1928 թ. վերջին՝ 27 կոլտնտեսություն[19]: Մարզում դրանց կազմակերպումը նոր թափ առավ 1929 թ. վերջին: Այնուամենայնիվ, այդտեղ ևս խախտվեց կոլտնտեսություն մտնելու կամավորության սկզբունքը, և հրահանգվեց արհեստական շտապողականություն: Մարզի կուսակցական և պետական մարմինները, օգտագործելով հարկադրանքի մեթոդը, ժամ առ ժամ ուռճացնում էին կոլեկտիվացման թվերը: Այսպես՝ եթե 1930 թ. հունվարի 25-ի դրությամբ մարզում կոլեկտիվացվել էր գյուղական տնտեսությունների 23 տոկոսը, ապա փետրվարի կեսերին այդ ցուցանիշը հասել էր ավելի քան 35

---

[16] Տե՛ս Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963, էջ 22:

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 19-20:

[18] Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, 3 հուլիսի, 1926:

[19] Տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 179, թ. 169:

տոկոսի[20]։ Լեռնային Ղարաբաղում ևս կոլտնտեսային շարժման ծավալման ընթացքում թույլ տրված սխալների հետևանքով գյուղում արհեստական կերպով ուժեղացվեց դասակարգային պայքարը («բանդիտական շարժում»)։ 1930 թ. մարտի 10-ի դրությամբ կոլեկտիվացման էր ենթարկվել մարզի գյուղական տնտեսությունների 63 տոկոսը, իսկ մի փոքր անց՝ 73,3 տոկոսը[21]։ Այդտեղ ևս ձեռնարկվեցին միջոցառումներ, որոնք նպաստեցին կոլեկտիվացման ընթացքում թույլ տրված սխալները շտկելուն։ Արդեն 1932 թ. վերջին մարզի 210 կոլտնտեսություններում ընդգրկված էր գյուղական տնտեսությունների 46 տոկոսը։ Հաջորդ տարիներին կազմակերպվեցին մի շարք պետական տնտեսություններ, ստեղծվեցին անասնապահական ֆերմաներ։ 1940 թ. մարզում կոլեկտիվացվել էր գյուղական տնտեսությունների 99 տոկոսը։

1920-1930-ական թթ. մարզի մշակութային կյանքը թեև դանդաղ, բայց զարգանում էր։ Արդեն երկրորդ հնգամյակի վերջին մարզի 200 դպրոցներում սովորում էին 36 996 երեխաներ։ Գործում էին բազմաթիվ ակումբներ, գրադարաններ, թատրոն, երևան եկան մարզական կառույցներ և այլն։

Այնուհանդերձ, Ադրբեջանի ազգային իրականության քաղաքականությունը, որն առավել ակնհայտ էր արցախահայության նկատմամբ, կտրվածությունը Խորհրդային Հայաստանից, լրջորեն խոչընդոտում էին ԼՂԻՄ-ի սոցիալ- տնտեսական և ազգային-մշակութային զարգացմանը։

---

[20] Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, 15 փետրվարի, 1930։

[21] Տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 130, թ. 48։